



## Ս Փ Յ Ո Ւ Ռ Գ Ո Ւ Մ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա  
ԵՎ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՂՋԱԳՈՒՐՈՒՄԸ

Առանձին հանույնով և մեծ կարևորությամբ արտատպում ենք Երուսաղեմի հայոց Պատ-  
փարհարանի պաշտոնաբերք «Սիոն» ամսագրի 1963 թվականի հոկտեմբեր—դեկտեմբեր  
միացյալ համարի խմբագրականից ֆազվածաբար ընդարձակ հատվածներ, ստորագրված ամ-  
նաստիվ Տ. Նդիշե սրբազան պատրիարհ հոր սկիզբիցի գրչով, ինչպես նաև Հարավային Ամ-  
րիկայի Հայաստանյայց եկեղեցու կենտրոնական վարչության պաշտոնաբերք «Հայ կեդրոն»  
ամսագրի 1964 թվականի հունվարի համարի խմբագրականից հատվածներ, ստորագրված հայ-  
րապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Քարգեն եպիսկոպոս Ապատյանի շնորհալի գրչով:

Երկու արժեքավոր և կուռ խմբագրականներն էլ գրի են առնվել սրտագին մտածումներով,  
րացտիկ շեմությամբ, որպես արտահայտիչը բովանդակ հայ ժողովրդի խոհերի, մտած-  
մունքների և իդեերի, 1963 թվականի հոկտեմբերի 26-ին Երուսաղեմում կատարված պատմա-  
կան ողջագուրման նշմարիտ, եկեղեցաշեն լույսի տակ, որը կոչված էր խաղաղություն և միու-  
րյուն հաստատելու Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ծնունդ և հայ ժողովրդի մեջ:

Խմբագրաբյուն «էջմիածին» ամսագրի

Ուրախ է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց  
Աթոռը և իր պաշտոնաթերթը «Սիոն», հայ-  
տարարել կարենալու, իր կարգին, այն  
սրտառուղ ղեպքը, որ տեղի ունեցավ երկու  
ամիսներ առաջ քրիստոնեական այս վեհա-  
վայրին մեջ: Ուրախ է մանավանդ Հայ Եկե-  
ղեցին և ժողովուրդը ի Հայաստան և ի  
սփյուռու աշխարհի, ի տես և ի լուր պատմա-  
կան այս ողջագուրումին, ուր մեր դարերու և  
հայրապետներու հոգիին ավաչն ու տրո-  
փյունն էր որ լավեցավ, անգամ մը ևս, ջաղցր  
և անպղտոր, Ս. էջմիածնի և Կիլիկիո կաթո-  
ղիկոսներու գրկախառն այս նոր ուխտով:

Ոգի և հրաշք է ամբողջապես Հայ Եկեղե-  
ցին, և հրաշագործներ զինքը ներկայացնելու  
կանչված հայրապետները, ինչպես երեկ այն-  
աես ու այսօր: Այդ հրաշքին ու ոգիին լույսն

ու շունչն էր, որ թրթռաց հոկտեմբեր 26-ին,  
մեր զույգ կաթողիկոսներու սրտերուն խորը  
և շրթներուն վրա, Երուսաղեմի Սրբոց Հա-  
կոբյանց մենաստանի կամարներուն ներքև  
և ներկա հայ ժողովուրդի հոգիներուն մեջ:  
Արժևորել կարենալու համար այդ հոգեսար-  
սուռ ձայնը, անհրաժեշտ է զգալ զայն, լոց-  
նելով մեր մեջ այն բուրբ խեղ և օտարոտի  
զգացումները, որոնք տարիներ ի վեր վզառ-  
նացնեն մեր եկեղեցական ու ազգային կյան-  
քը, անիմաստ պաշքարի կրկես դարձնելով  
արտասահմանի մեր գոյությունը:

Վերջ՝ ամեն տեսակի հոռետեսությանց և  
մեր պատմության սրտառուղ խորհուրդը հեր-  
քող մոլար ձգտումներուն: Իրագործումը  
պետք չէ նկատվի կողմնակի շահերու աճ-  
պարար ցուցադրություն մը լոկ, տեսակ մը

բաղաբաական ձեռնածուխում, որոնց հանդիսատես կըլլանք ամեն օր: Կուղենք հավատալ, թե տեղի ունեցածը սրբազան դաշինք մըն էր, հավատքով ու սիրով լեցուն, նման երանյալ մեր մեծ հայրապետներու դարավոր փորձին, որոնք դիտցած են միշտ ներկայի մշուշներեն և տրամուխումներեն անդին՝ տեսնել մեզի հատուկ ճշմարտութիւնը, և ոտնակոխելով ամեն կարգի արգելքներ, նայած են հասարակաց բարիքի այդ լուսաստղին, բոլորապիւնդ ու վճռական:

Հայ Եկեղեցին միշտ ձգտած է միասնակաւութեան, հակառակ մեր պատմութեան ծանոթ ցավին, անմիաբան ըլլալու հիվանդութեան, որ մայրն է եղած բոլոր շարիքներուն: Միութեան մեջ միայն մենք կրցած ենք, թեթևի և սիրտ-սրտի, ստեղծել բաղձալի դրախտը հոգիներուն, օրհնելով հիշատակը մեռելներուն և շինելով հպարտութիւնը ողջերուն:

Շնորհիվ այդ ոգիին և սկզբունքին է, որ Հայ Եկեղեցիին կրցած է գոյատևել և դիմադրել անցյալի չարաղետ փոթորիկներուն և ներքին ու արտաքին պառակտիչ ուժերուն: Ծիշտ է, թե մեր պատմական դարավոր կյանքի մեջ եղած են շրջաններ, ուր փառանսեր և ներհակ մտայնութեան տեր անձեր՝ ճիղճ ու եսական հաշիվներն տարված, դաված են այս սկզբունքին ու դաղափարին, սակայն հանրային շահը և մեր ժողովուրդի խղճմտանքը ըրած են միշտ իրենց գերագույնը, վերցնելու հասարակաց բարիքին դեմ եղած շեղումները՝ ի նպաստ միութեան:

Մեր Եկեղեցիւ բազմերախտ գործիչները ոսկի օղակը եղած են նույնպէս մեր պետական ու հանրային կյանքին մեջ տեղի ունեցող պառակտումներուն, և իրավաստճութեամբ հարդարել փորձած են ամեն տեսակի շեղում և անհասկացողութիւն, որոնք մեր երկրի աշխարհազրական դիրքի և քաղաքական պարտադրումներու պատճառով, հաճախ անջատած են մեզ իրարմե, ի հեճուկս մեր ազգային ամբողջական շահերուն:

Մասնավորելով մեր խոսքը Հայ Եկեղեցիի և իր այժմու Կաթողիկոսական զուլգ Աթոռներու փոխհարաբերութեան նկատմամբ, այն օրեն ի վեր, երբ մեր հոգևոր իշխանութիւնը Սիւնն Ս. Էջմիածին վերադարձավ, միասնականութեան գաղափարը ոչ միայն շնուցավ, այլ ավելի շեշտվեցավ: Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռին զուգահեռ գոյութիւնը չնկատվեցավ իբրև հակաթոռ Ամենայն Հայոց Հայրապետութեան, այլ անոր անբաժանելի մասը և օժանդակը, Կիլիկիո մեր ժողովուրդի հովվութեան և առաջնորդութեան մեջ:

Ծիշտ է, որ թե՛ Կիլիկիո և թե՛ Ս. Էջմիածնի գահակալներու մեջ եղած են անհատներ,

որոնք, առաջնորդված իրենց տրամ փառասիրութիւններեն, հակառակ շարժած են մեր Եկեղեցիի և ժողովուրդի հոգին առողջ պահող ուժին և միութեան: Ասոնք սակայն ընդհանուր զգացումեն և հասկացողութենեն շեղած անհատներ եղած են միայն, և իրենց տխուր արարքը պայմանավոր մնացած է լոկ իրենց շրջանով: առանց խախտել կարենալու Հայ Եկեղեցիւ համերաշխութեան ողին և համագործակցութեան բնական ընթացքը:

Մեր մեծ աղետն հետո, Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց և Կիլիկիո տարագիր Կաթողիկոսական Աթոռներու միջև ստեղծվեցավ անկեղծ և սերտ գործակցութիւն մը, նախ իբրև շարունակութիւն իրիմյան և Սահակ Եկեղեցանւիւր և լուսամիտ կաթողիկոսներու սկսած սիրալիւր հարաբերութեան, ապա իբրև արդունք համազգային աղետին, որ զրկելով արևմտահայութիւնը իր պատմական հայրենիքեն և մեկ միլիոն դավակներեն, կզրկեր նաև մեր Եկեղեցիին իր գոյութեան կովաններեն: Այս սխուր պարագան իր անդրադարձը կունենար նաև մտքերու վրա, և ժառանգական ու ավանդական կարծեցյալ հավանութիւնները, ինչպէս նաև անպարագիծ երազները կթանգարանվին այս մը, և հայ ժողովուրդի վտիտ մարմին մասերը իրենց ֆիզիկական և հոգեկան գոյութեան ի խնդիր կմիավորվին, զգալով համերաշխութեան և միութեան կարիքը: Հայ Եկեղեցիին անգամ մը ևս պիտի լծվեր իր պատմական դերին, պիտի հավաքեր, պիտի սփոփեր, պիտի հուսադրեր և ժողովուրդի ծառայութեան հույլ մը անձնուղճներ ի սպաս պիտի դնէր մեր Եկեղեցիւ դարավոր այդ դերի իրագործման, պատրաստելու իր փրկութեան տապանը հարուցված և գալիք մրրիկներուն դեմ:

Ս. Էջմիածնի և Կիլիկիո Աթոռներու միջև գոյութիւն ունեցող հարաբերութիւնները ավելի անկեղծ և սերտ բնույթ ստացան Բարգեն աթոռակից և խորեն կաթողիկոսներու օրով: Իսկ այդ հարաբերութիւնները իրենց բարձրագույն աստիճանին պիտի հասնին Գևորգ Զ Կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Կաթողիկոսի շրջանին: Երկու Աթոռներու միջև գոյութիւն ունեցող կապը զոգված է ազգային և եկեղեցական միասնականութեան բարձր գաղափարներով, և ամրացված դարերու ողջամիտ ձգտումներով:

... Սակայն Ս. Էջմիածինը ուրիշ խորհուրդով և ձգողութեամբ կներկայանա մեր հոգիներուն: Մայր Աթոռը կրոնական նվիրապետութեան մը կեդրոնը չէ միայն, անիկա հայուն հոգեկան հայրենիքն է, իմանալի այն պարունակը, զոր յուրաքանչյուր ժողովուրդ ունի և կստեղծէ իբրև գերազույն ամբողջ ոչ միայն իր անցյալին, այլ մանավանդ սպաս-

գային: Մայր Աթոռի այդ դերը չէ դադարած, այսօր ավելի քան երբեք պետք ունինք այդ տեսլացած, հոգիացած խորհրդանշանին, կատարանալ վեր բռնելու մեր ընդարմացած հոգին և փշուր-շփուր եղած ու արտասահմանի բացաստաններուն նետված մարմինը:

Մեր եկեղեցական ուրիշ նվիրապետական Աթոռներն Ս. Էջմիածինը կտարբերի ճիշտ այն համեմատություններ, ինչպես մեր երկրի ֆիզիկ նկարագրին մեջ Այրարատյան դաշտը կտարբերի մյուս մեծ միություններն: Երուսաղեմ, Վասպուրական, Կիլիկիա, մեզի կթեթալան խորունկ ապրումներ, բայց անոնց մեջ ոչ կրցած է հակակշռել խորագույն հուզումը, որուն լարերը կմնան ծածկված գերի լեռան սրբազան ալբերուն խորը: Ս. Էջմիածինը միայն վայր մը չէ, նոյան տապանին խորհուրդովը պաշտպանված: Անիկա այն կայանն է, ուր կբաշվին, անդիմադրելի մղումով մը, մեր ժողովուրդին գերագույն խտությունները: Մեր հայրապետները եթե իրենց տկարությունները պարտական են իրենց ժամանակին, իրենց առաքինությունները սակայն կուզան ցեղին անմահ պահեստեն:

Տազնապներ շատ անցուցած է Ս. Էջմիածինը...: Այդ բոլորին դիմացած է ան և կդիմանա, ապրեցնելով իր մեջ և իրմով իրեն հառող հոգիները, եթե այս վերջիններուն

մեջ չէ մեռած ու չէ աղոտած Լուսավորչի կանթեղը՝ այն հեքիաթային և աննյութական հղացքը, որ չի բացատրվիր, բայց կա իբրև գերագույն կամար-գոտի ժամանակն ընդունված հոգիներուն վերև:

Հայ ժողովուրդը արտասահմանի օտարություն մեջ պետք ունի իր հոգեկան լույսը ընդունելու Ս. Էջմիածինն: Որպեսզի բարիքով լեցուն այս դարավոր կապը կարենա ըլլալ սերտ և աննկատ, ինչպես էր ան երեկ, անհրաժեշտ է, որ Ընդհանրական Հայրապետը, իբրև կրոնական գերագույն ուղղիչ և Պետ, դիմավորվի անվերապահորեն, հարգանքով և սիրով: Լուսավորչի Աթոռը պետք է անխախտ պատվանդանը ըլլա ինչպես մեր հավատքին՝ այնպես ալ մեր սիրույն: Միասնական այս անվերապահ մտածումին ու կեցվածքին մեջ է ոչ միայն մեր Եկեղեցվո զորացումը՝ այլ նաև մեր ժողովուրդի ուժն ու փրկությունը:

Երանի թե մեր ժողովուրդի գոյության և գոյատևման նախանձավորները նոր և թերի ազդակներու ապավինելու փոխարեն, գիտնային լսել այս առիթով մեր զույգ Հայրապետներու հոգեձայններուն մեջ են պատգամը մեր աստվածարյալ նախնյաց և ձայնը մեր պատմության...:

(Խմբագրական «Միտե»-ի.  
1963 հոկտեմբեր—դեկտեմբեր):

